

ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՄԱՆ ՇՈՒՐՋԸ

ԽԵՐԵՋԱ ՂԱՐԱԳՅՈՒՆՆԵՐ

Օտարազգի բառերի, տերմինների և հատուկ անունների տառադարձման գոյություն ունեցող կանոնները ակնհայտորեն չեն բավարարում տառադարձական արդի պահանջները: Մի շարք դեպքերում ստեղծվել է խզում տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշումների և գործնականում կիրառվող սկզբունքների միջև:

Այս ամենը առիթ է տվել տառադարձական բազմաթիվ զուգահեռ ձևերի և անմիօրինակությունների առաջացման:

Գոյություն ունեցող այդ վիճակի վերացման տեսակետից շատ կարևոր է պրոֆ. Գ. Զահուկյանի տառադարձման հարցերին նվիրված հոդվածը (նախագիծը)¹: Քննարկման ներկայացված նախագծում նկատի են առնվել այնպիսի հարցեր, որոնք անտեսված էին ռուսերեն և օտար բառերի ու տերմինների տառադարձության նորմաների վերաբերյալ տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշումներում, վերանայվել են մի շարք կանոններ և դրանց փոխարեն առաջարկվել նորերը, ինչպես և վերացվել նախորդ որոշումներում տեղ գտած որոշ հակասություններ: Այստեղ հատկապես կարևոր է այն, որ սկզբունքներում հաշվի են առնվել բոլոր այն լեզուները, որոնց հետ մենք առիթ ենք ունենում շփվելու: Հատկապես ուշադրություն է դարձվել անգլերենից արվող տառադարձումների վրա:

Նոր նախագիծը, որտեղ ամփոփված են նաև տառադարձման հարցերի վերաբերյալ նախորդ բոլոր որոշումները, լրացվելուց, ճշգրտվելուց և համապատասխան օրինակներով հարստացվելուց հետո կարող է ուղեցույց հանդիսանալ օտարազգի բառերի տառադարձման համար:

Ինչպես հայտնի է, հայերենը օտար բառերի տառադարձման ժամանակ մեծ մասամբ հենվում է ռուսական տառադարձության վրա: Եվ դա հասկանալի է, քանի որ հայերենը ներկայումս փոխառությունները գերազանցապես կատարում է ռուսերենի միջոցով: Ուստի, շատ բառեր, որոնք ռուսերենը փոխ է առել այլ լեզուներից, հայերենի մեջ միջնորդաբար մտել են ռուսական տառադարձությամբ:

Դեռևս տերմինաբանական կոմիտեի 1939 թ. որոշումներում հիմք է ընդունվել փոխատու լեզվի արտասանությանը հարազատ մնալու սկզբունքը՝ հայերենի հնչյունական համակարգի ընձեռած հնարավորությունների սահմաններում: Մասնավորապես, որոշվել է օտարազգի բառերի տառադարձության հարցում հիմնական աղբյուր համարել ռուսաց լեզուն, միաժամանակ հաշվի առնելով հայերենի՝ ռուսերենից տարբեր հնչյունական առանձնահատկությունները, որոնց կիրառումը մի շարք դեպքերում ավելի ճշգրտորեն է արտահայտում սկզբնաղբյուր բառի հնչումը². Օրինակ՝ Шхалтыдо, Цхалтыдо, Зваровишани—Чабукани, Галустан—Дагестан, Թեմրան—Тегран, Քեմր-

1 Գ. Բ. Զահուկյան, Օտարազգի բառերի տառադարձման սկզբունքները, «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 3, էջ 25—34:

2 Տե՛ս «Տերմինաբանական ուղեցույց», Երևան, 1964, էջ 15:

րիջ—Кембридж, Հյում—Хюм, Զորջ—Джордж և այլն: Այս սկզբունքը թեև հիմնականում կիրառվում է, սակայն քիչ չեն նաև շեղումները, որոնք հաճախ ժամանակավոր բնույթ են կրում: Որոշ դեպքերում անտեսվում են մի շարք դժվարամատչելի արևելյան լեզուների (ճապոներեն, չինարեն, կորեերեն, հնդկերեն) հնչյունները հայերենի համապատասխան հնչյուններով տառադարձելու հնարավորությունները³:

Տառադարձման հարցերը կանոնավորելիս հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնել անհաստատ մոտեցում և տարընթացություն հարուցող խնդիրների վրա: Քննարկենք դրանցից մի քանիսը:

1. Հատ գոյություն ունեցող կանոնի՝ լատինադիր լեզուների p, t, k և ուսերեն п, т, к-ն հայերենում պետք է տառադարձել պ, տ, կ: Կանոնի անբավարար լինելն ակնհայտ է, քանի որ ներկայումս եվրոպական լեզուների, մանավանդ անգլերենի p, t, k-ն բազմաթիվ դեպքերում տառադարձվում են նաև փ, թ, ֆ:

Ստեղծվել է այնպիսի վիճակ, երբ եվրոպական շատ բառերի և հատուկ անունների տառադարձման համար չի կիրառվում որոշակի սկզբունք, և գրանցում մերթ գրվում է պ, տ, կ, մերթ՝ փ, թ, ֆ. օրինակ՝ Տուլուզ—Թուլուզ, Կիպլինգ—Քիփլինգ, Դանտե—Դանթե, Վատեռլոո—Վաթեռլոո, Իվ Մոնտան—Իվ Մոնթան, Պոռտուգալիա—Պորթուգալիա (նաև՝ Փորթուգալիա), Պլիմուտ—Փլիմութ, Ֆլիտ—Ֆլիրթ, մակետ—մաֆեա, տուրտ—տուրթ և այլն: Անգլերեն բառերում և հատուկ անուններում p, t, k-ի փ, թ, ֆ տառադարձումն ավելի տարածված է և շատ դեպքերում կրում է հաստատուն բնույթ, ինչպես՝ Քենեդի, Քիսինգեր, Քենտերբերի, Թրեյլեր, Թեյլոր, Թոմսոն, Քեմքրիջ, Քենտ (նաև Քենթ), Քլեյ, թենիս և այլն⁴:

Հաշվի առնելով p, t, k հնչյունների շնչեղ արտասանությունը անգլերենում, նոր նախագծում առաջարկվում է դրանք բառասկզբում տառադարձել փ, թ, ֆ, մնացած դեպքերում՝ պ, տ, կ: Սակայն ակնհայտ է, որ այդպես պետք է վարվել նաև այն դեպքում, երբ բարդ բառի (կամ հատուկ անվան) երկրորդ բաղադրիչը սկսվում է p, t, k-ով, ինչպես՝ Քեյպթաուն (Capetown), Բրիջթաուն (Bridgetown), Նյուքասլ (newcastle), Զորջթաուն (Georgetown) և այլն: Այս դեպքերում էլ առաջ է գալիս շնչեղ խուլին նախորդող խուլը նույնպես շնչեղով արտահայտելու անհրաժեշտությունը. օրինակ՝ Քեյպթաուն (ինչպես գրվում է) և ոչ՝ Բեյպթաուն:

P, t, k հնչյունները որոշակիորեն շնչեղ են արտասանվում և բառամիջում s-ից առաջ, ինչպես՝ Բեթսի, Պիթսբուրգ, լիփսի, էկլամփսիա, կեֆա և այլն, որը վերաբերում է անգլերենից բացի նաև եվրոպական մյուս լեզուներին:

Այնուհետև, երբ բառամիջում կա f հնչյունը, բառասկզբի կ-ն պահպանվում է. օրինակ՝ կոֆա (ոչ՝ ֆոֆա), կեֆա (ոչ՝ ֆեֆա) և այլն: Բառասկզբի կ-ն պահպանվում է նաև անգլերեն մի շարք անուններում. ինչպես՝ Կանադա, Կալիֆոռնիա, Կոռնուել, կոկտեյլ և այլն:

Ներկայումս անգլերենի ոչ միայն բառասկզբի, այլև բառամիջի ու բառավերջի p, t, k-ի փ, թ, ֆ տառադարձելը բավականաչափ տարածված երեվույթ է (հմտ. Նյու—Յորք, «Նյու—Յորքեր», Յորքշիր, Դեյվի, Մայֆլ, Մեֆ Դեյ-

³ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, նշվ. հոդվածը, էջ 25:

⁴ Արևելյան լեզուների հարցը այստեղ չի շոշափվում:

գոր և այլն), հաճախ այդ սկզբունքն է կիրառվում նաև եվրոպական այլ լեզուների նկատմամբ⁵։

Այս հարցում չի կարելի անտեսել նաև ավանդական գրովթյուն ունեցող եվրոպական բազմաթիվ անուններ, որոնցում ք, է, կ-ն տառադարձված է փ, թ, ֆ. *ինչպես՝* Գյոթե, Վերթեր, Քեթնովեն, գոթեր, գոթերեն, Լոթարինգիա, բալթիական, Քյոլն, Քյոնիգսբերգ և այլն⁶։

Վերոհիշյալ հանգամանքները հաշվի առնելով, անհրաժեշտ է այս հարցը բազմակողմանիորեն մշակել և հետո միայն որոշում կայացնել։

2. Հակառակ ընդունված կանոնի, ըստ որի բառամիջում ն-ից և լ-ից առաջ օտար ր-ն և ռուսերեն ք-ն պետք է տառադարձել ո, ներկայումս, առանց որևէ սկզբունքի, նշված դիրքերում գրվում է մերթ ո, մերթ՝ ր (բացառությամբ մի շարք արմատացած ավանդական ձևերի՝ Բեռլին, պառլամենտ, Առնոլդ և այլն). օրինակ՝ Կալիֆոռնիա-Կալիֆոռնիա, Վեոներ-Վեոներ, Չեոնիշևսկի-Չեոնիշևսկի, Կոպեոնիկոս-Կոպեոնիկոս, տուոնե-տուոնե, ինտեոնաւ-ինտեոնաւ, Շաոլ-Շաոլ, Կաոլոս-Կաոլոս, Մաոլենա-Մաոլենա, Չաոլգ-Չաոլգ և այլն։ Թվում է, թե միտումը այժմ ավելի շատ ր տառադարձելն է։

Հայերեն ոչ փոխառյալ բառերում ն-ից (հազվադեպ նաև լ-ից) առաջ կարող է լինել և՛ ո, և՛ ր. օրինակ՝ բոնել, առնետ, դառնալ և՛ վերնաճաղ, գարնանային, արնամման։

Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոխատու լեզվում այդ կարգի բառերի համապատասխան դիրքերում հնչվում է ո, ապա հետևողականորեն, ն-ից և լ-ից առաջ, ր(ք)-ն պետք է տառադարձել ո։

Այստեղ առանց հիմունքի որևէ բացառության ընդունումը (ինտեոնացիոնալ, կոմիտեոն, Կաոլ) նպատակահարմար չէ, քանի որ դա դուռ է բացում անմիօրինակությունների առաջ։ Վերոհիշյալ բացառությունների պատճառով, առաջ է գալիս դրանց հետ առնչվող կամ համանման կազմություն ունեցող մի խումբ բառերի ո-ով, թե ր-ով տառադարձելու հարցը. *ինչպես՝* ինտեոնաւ, ալտեոնաւիվ, Կաոլսոն, Կաոլգրեն, Կաոլսքադ, Կաոլոս, Կաոլեն, Կաոլովի Վաոլի, Մաոլեն, Մաոլենա, Չաոլտոն, Չաոլգ և այլն։ Եվ, իրոք, անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ պետք է գրել Շաոլ, բայց Կաոլ։

Որպեսզի տարակարծությունները և տարակուսանքները վերանան, առաջարկում ենք բոլոր տյո՞ղ կարգի բառերի համապատասխան դիրքերում գրել ո՝ տուոնիք, տուոնե, ինտեոնաւ, ինտեոնացիոնալ, կիբեոնետիկա, Կալիֆոռնիա, Կոոնեիլոս, Կաոլեն, Մաոլենա, Կաոլ, Կաոլա, Կոոնեյլոկ, Չեոնիլս, Կոոնիլով, Բաոնետ և այլն։

Օտարազգի բառերում ն-ից առաջ պետք է գրել ր և ոչ՝ ո միայն այն դեպքում, երբ ն-ն գտնվում է երկու բաղաձայնների միջև։ Այս դիրքում ն-ից առաջ, որպես կանոն, կազմվում է գաղտնավանկ, այսինքն՝ արտասանվում է լիահունչ ը, որը պատճառ է դառնում ո և ն հնչյունների իրարից անջատման. *ինչպես՝* Տոռ[ը]նդայկ, Կոռ[ը]նթոս, Տոռ[ը]նկա, Կոռ[ը]նվայլ և այլն։

Եթե ն-ին հաջորդում է յ, ապա ն-ից առաջ գաղտնավանկ չի կազմվում՝ յ-ի և նախորդող բաղաձայնի կապակցված արտասանության պատճառով։

⁵ Տե՛ս ամենօրյա մամուլը, թարգմանական դրականությունը և այլն։

⁶ Եվրոպական լեզուների ք, է, կ-ն փ, թ, ֆ (և ոչ պ, տ, կ) տառադարձելու հարցում անփոփոխ է արևմտահայերենում կիրառվող տառադարձման սկզբունքների ազդեցությունը։

օրինակ՝ Բուռ/նյակ: Այդ պատճառով ն-ից առաջ այս դիրքում ր (р)-ն պետք է տառադարձել ըստ հնչման՝ ո:

Այնուհետև, ի լրացումն բառամիջում ր (р)-ն տառադարձելու կանոնի անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը ևս.

Այն դեպքերում, երբ բառամիջում ռուսերենի ք-ին հաջորդում է ы հնչյունը, նպատակահարմար է ք-ն տառադարձել ո և ոչ՝ ր: Այսպես վարվելով, առավել ճշգրտորեն արտահայտած կլինենք փոխատու լեզվի հնչումը. ինչպես՝ Կռիլով (Крылов), Նարշկինա (Нарышкина), Կռիլյա սովետով (Крылья советов), Պյոռիշկին (Пёрышкин), Բարիշնիկովա (Барышников), Կռիմսկի (Крымский), Բարիշև (Барышев) և այլն:

3. Մի շարք օտարազգի բառերում և հատուկ անուններում գրությունը տատանվում է իե, իո, իա և յե, յո, յա-ի միջև, օրինակ՝ Մոլիեր-Մոլյեր, կալիերա-կարյերա, ատելիե-ատելյե, ինտերիեր-ինտերյեր, կուրիոզ-կուրյոզ, մեյալիոն-մեյալյոն, Տոլիատտի-Տոլյատտի և այլն, բացառությամբ օբյեկտ, սուբյեկտ բառերի, որոնց գրությունը հաստատուն է: Չի բացառվում այս կարգի բառերի նաև առանց յ-ի գրությունը, ինչպես՝ ռեյեֆ, փլյեռոն և այլն:

Քննարկման ներկայացված նախագծում առաջարկվում է լատիներենի je, ie-ն և համապատասխան ռուսերեն եե, եե-ն տառադարձել ոչ թե իե (ինչպես որ ընդունված է, բայց հաճախակի խախտվում է), այլ՝ յե:

Դա ճիշտ մոտեցում է, որը պետք է ընդլայնել և եե, եե-ից բացի տարածել նաև մյուս համապատասխան դեպքերի վրա: Դա նշանակում է՝ այն բոլոր դեպքերում, երբ տարբեր լեզուների տարբեր հնչյունակապակցություններ ռուսերենում համապատասխանում են եե, եե, եօ, եյ, եյ, եյ և եե, եե, եյ, եյ, եյ-ին⁷, ապա դրանք պետք է համապատասխանաբար հայերեն տառադարձել յե, յո, յի, յա, յու. օրինակ՝ պրեմյեր, ինտերյեր, ատելյե, ռեյեֆ, բարյեր, կարյերա, ֆելյետոն, բարելեյֆ, Զուլյետ, Մոլյեր, Գոտյե, էտյեն, Վյետնամ, Պյեռ, փլյեռոն, Մարսելյեզ, լիլյենտալ, օբյեկտ, սուբյեկտ, իլյիշ, իլյինսկի, կանյոն, շինյոն, մինյոն, բուլյոն, կուրյոզ, զիլյոտին, կոնյուկտիվիա, կոնյուկտուրա, ադյուտանտ, Տոլյատտի, Ռեյկյավիկ, Սանդայագո, իլյա և այլն:

Օտար օ, ու, իա-ին համապատասխանող ռուսերենի է, յո, յա-ն հայերեն նույնպես պետք է տառադարձել յո, յու, յա. օրինակ՝ դիրիժյոր, ռեժիսյոր, ստաժյոր, պարտնյոր, կոմյունիկե, ռեզյումե, Վիլյամ, Տյանշան և այլն:

Այսպիսի դեպքերում ելակետը ռուսերենը ընդունելով (միաժամանակ չանտեսելով, անշուշտ, սկզբնաղբյուրը), մենք կարող ենք խուսափել տառադարձական շատ բարդություններից և, որ կարևոր է, երկվություններից:

4. Օտար բառերի, մանավանդ հատուկ անունների կրկնակ բաղաձայնները բառամիջում և բառավերջում տառադարձվում են մերթ մեկ, մերթ երկու բաղաձայնով. ինչպես՝ անտենա-անտեննա, անեֆսիա-անեֆսիա, Պիկասո-Պիկասսո, Դիկենս-Դիկենս, Սկոտ-Սկոտտ, Բոկաչչո-Բոկկաչչո և այլն:

Կանոնը պահանջում է օտարազգի բառերի կրկնակ բաղաձայնների փոխարեն հայերենում գրել մեկ բաղաձայն, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արտասանվում են երկար կամ ուժգին:

Դա, անշուշտ, ճիշտ մոտեցում է, քանի որ հայերենին առհասարակ հատուկ չէ միատեսակ բաղաձայնների կրկնությունը: Այդ պատճառով բուն հա-

⁷ Սրանց մեծ մասը նախագծում նկատի է առնվել տարբեր կետերում (7, 10, 36, 37):

յիւրեմ բառերում երկու նույնական բաղաձայններ կարող են հանդիպել կամ ձայնավորի սղումով կազմված ձևերում (օրինակ՝ բըջաճյուք, ճովվի, զննել) և կամ երկու ձևայինների սահմանագծում, այսինքն բարդության, ածանցման, նաև հապավման ժամանակ (օրինակ՝ երկկայմանի, աննպաստ, քաղցիկ), որոնցում երկար հնչումը պարտադիր է:

Սակայն, փաստերը ցույց են տալիս, որ օտարազգի անժանոթ բառերի տառադարձման ժամանակ, երբ մեծ մասամբ պարզ չէ, թե տվյալ բառում կրկնակ բաղաձայնները ինչպես են արտասանվում, գործնականում, չնչին բացառություներով, մանավանդ հատուկ անուններում, այդ կանոնը ըստ կրթության չի կիրառվում:

Դրանում համոզվելու համար մենք համեմատեցինք լեզվաբանական մի գրքի բովանդակության մեջ նշված օտարազգի անձնանունների ռուսերեն և հայերեն տառադարձումները և չգտանք մի օրինակ, որտեղ ռուսերենի երկու բաղաձայնի դիմաց հայերենում մեկը լիներ (տվյալ դեպքում ռուսական տառադարձությունը համապատասխանում է օտարին). ինչպես՝ Մոնբոդլո (հմմտ. Монбодло), Լոկկ (Локк), Հոբբս (Гоббс), Բեկկեր (Беккер), Բալլի (Балли), Պոտտ (Потт), Բոպպ (Бопп), Գրամմոն (Граммон), Կասսիրեր (Кассирер), Բեցենբերգեր (Бецценбергер), Գինեկեն (Гиннекен) և այլն⁸:

Ինչպես տեսնում ենք, այստեղ կիրառված չէ նաև բառավերջի կրկնակ բաղաձայնները մեկով տառադարձելու մասին տերմինաբանական կոմիտեի որոշակի ցուցումը: Նույն ձևով, հակառակ կանոնի, գերմանական անունների՝ որպես մեկ հնչյուն արտասանվող բառավերջի ձև-ն, տառադարձված է դա և ոչ՝ դ կամ տ. ինչպես՝ Շմիդտ, Վուդդ, Հուբբոլդտ, Շուխտեր:

Տառադարձման այս նույն սկզբունքներն են կիրառվում նաև շատ ուրիշ աշխատություններում և մանավանդ մամուլում: Եվ սա պատահական չէ:

Այսպիսի մոտեցումը, մեր կարծիքով, արդարանում է նրանով, որ անձնանունների և առհասարակ հատուկ անունների տառադարձության ժամանակ հնչումից բացի ներկայանում է նաև փոխատու լեզվի գրությանը մոտ մնալու պահանջը:

Նույնիսկ բառավերջում, որի հարցը շատ որոշակի է և պարզ, հատկապես միավանկ բառերում, հակառակ արտասանության, մեծ մասամբ երկու նույնանման բաղաձայնն էլ պահպանվում է. ինչպես՝ միսս (օրիորդ), բիլլ, ֆինն, քալլ, բոսս, գալլ, տոնն, մանավանդ հատուկ անուններում՝ Ուատտ, Բոպպ, Վոսս, Բիլլ, Գրիմմ, Մանն, Բոնն և այլն:

Ոմանք այսպիսի գրության դեմ իրավացիորեն կարող են առարկել, ելնելով բառավերջի կրկնակ բաղաձայնների արտասանության հայերենի օրինաչափությունից, ըստ որի երկու նույնական բաղաձայնները բառավերջում արտասանվում են ը գաղտնավանկով. օրինակ՝ ճույս[ը]ս, ճոգս[ը]ս, ին[ը]ն, յուրովսան[ը]ն և այլն⁹: Նշանակում է տոնն, Պոտտ գրելով, պետք է արտասանել տոն[ը]ն, Պոտ[ը]տ:

Սակայն այս հարցում պետք է նկատի ունենալ այն, որ հայոց լեզվի զարգացման ներկա փուլում օտար բառերի արտասանության մեջ առաջա-

⁸ Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանության ներածություն, հ. II, Երևան, 1962, էջ 574—594:

⁹ Տարբ. տեղոց բառերը, որոնք արտասանվում էին տար[ը]ր, անգոր[ը]ր, այժմ ավելի հաճախ հնչվում են առանց գաղտնավանկի:

ցել են որոշակի ունակութիւններ, այսինքն նկատւում են այնպիսի տեղաշարժեր, որոնք ստեղծվել են փոխատու լեզվի համապատասխան բառերի արտասանութեանը ընդօրինակելու ճանապարհով: Օրինակ, Նեվսկի, Սպասսկի ազգանունները, ըստ հայերենի արտասանական օրինաչափութեան, պետք է հնչեինք Նեվ[ը]սկի, Սպաս[ը]սկի, սակայն իրականում այդպես չենք արտասանում, այլ այնպես, ինչպես դրանք հնչվում են փոխատու լեզվում, նշանակում է մի շարք օտար բառերի գրութեան և արտասանութեան մեջ ստեղծվել է անհամապատասխանութիւն:

Սա բացատրիկ երևույթ չէ, այլ հատուկ է շատ լեզուների:

Ուստի, նկատի ունենալով նաև կիրառվող պրակտիկան, կարելի է կանոնը վերանայել և հատուկ անունների (թերևս նաև միավանկ բառերի) կրկնակ բաղաձայնների տառադարձութեան հարցում անել որոշ վերապահութիւն, ըստ սկզբնաղբյուր լեզվի գրելով երկու բաղաձայն: Խոսքն, անշուշտ, ավանդական բառերի մասին չէ, որոնց գրութիւնն արդեն արմատացած է, այլ նոր ներմուծվող, գրքային և սահմանափակ կիրառութիւն ունեցող անվանումների և բառերի, որոնք տարածվելու և որոշակի արտասանութիւն ձեռք բերելու դեպքում կարող են ըստ արտասանութեան գրվել մեկ բաղաձայնով. օրինակ՝ Դիկենս, ոչ՝ Դիկկենս, Բոկաչչո, ոչ՝ Բոկկաչչո, անտենա, ոչ՝ անտեննա և այլն:

Նույն մոտեցումից ելնելով, կարելի է պահել և գերմանական անունների դտ բառավերջը՝ տարածում չստացած բառերում (օրինակ՝ Բրանդտ և այլն):

5. Օտարազգի բաղմաթիվ բառերում վերջին ա-ն պահվում կամ զեղչվում է. օրինակ՝ դիետ—դիետա, արեն—արենա, ռեպլիկ—ռեպլիկա, թեռ—թեռեմա, բրիգադ—բրիգադա, սյուիտ—սյուիտա, կանտատ—կանտատա, օպերետ—օպերետա, պարտիտուր—պարտիտուրա, ուվերտյուր—ուվերտյուրա, նոբ—նոբմա և այլն.

Այս հարցը շատ դժվարութիւններ է հարուցում: Դրա վերաբերյալ քննարկման ներկայացված նախագծում մանրամասն կետեր են մշակված և տրված է ճիշտ կողմնորոշում՝ վերջին ա-ն պահպանել միայն որոշակի պայմանների առկայութեան դեպքում:

Այդ պայմաններից մեկը (4-րդ կետի բ ենթակետը) հտեյալն է. եթե ա-ին նախորդում են բաղաձայնական այնպիսի զուգորդումներ, որոնք հայերենի համար խորթ են կամ առանց ձայնավորի անարտասանելի (кба, нба, бза, мза, пка, тка, мба, гма, мна, бра, дра, тра և այլն), ապա ա-ն չպետք է զեղչել:

Այս ելակետը մեզ հիմնավոր չի թվում, քանի որ հայերենում ներկայումս կիրառւում են հայերենի համար խորթ կամ անսովոր հնչյունազուգորդումներով մեծ թվով օտարազգի բառեր, մանավանդ հատուկ անուններ, որոնց արտասանութիւնը որևէ դժվարութիւն չի հարուցում. օրինակ՝ տակա, բալանս, Ցիպֆ, դրեյֆ, ռեզերվ, տորֆ, պլաշչ, մատչ, ռևանչ. զամչ, ռելս, բրոնզ, ինչպես և՛ մետր, մինիստր, կալիբր, կադր, սկաֆանդր, բակալավր, շիֆր, և այլն: Այդ նշանակում է, որ եթե բառավերջի ա-ին նախորդում են հայերենին խորթ հնչյունազուգորդումներ, ապա դրանք ա-ն պահելու հարցում, որևէ դեր չեն կարող կատարել. օրինակ՝ բրոնզ (ռուսերեն бронза), զամչ (ռուսերեն замча), կոբրա, բայց՝ կալիբր, էսկադրա, բայց՝ կադր և այլն:

Հայոց լեզվի ոգին պահանջում է վերջին աս-ն-գեղչել, ուստի այդ ելակետով էլ պետք է առաջնորդվել, առանց ծայրահեղությունների մեջ ընկնելու:

6. Օտար լեզուների մոտավորապես ը հնչվող ձայնավորները, հակառակ արևելահայերենում ընդունված կանոնի, երբեմն տառադարձվում են նաև ը. օրինակ՝ Բենեցիանու—Բընըցիանու, Հերալդ—Հերլդ, Էմերսոն—Էմերսըն, Նասեր—Նասըր, ինչպես նաև՝ Քերընթախ, Հարփըրզ, Ֆրիմըն և այլն: Ը-ով տառադարձելու դեպքերը, որոնք արևելահայերենում վերջին ժամանակներս ավելի հաճախակի են դարձել, արևմտահայկական աղբյուրներից թափանցած, կամ այդ սկզբունքով կատարված տառադարձումներ են:

Ինչպես հայտնի է, արևմտահայերենում ձայնավորների փոխարեն ը-ի գրությունը շատ տարածված է (հմմտ. Ուաշինգթըն, Նիսըն և այլն), և ը-ն գրվում է ոչ միայն որևէ ձայնավորի փոխարեն, այլև այն դեպքում, երբ ը է հնչվում համապատասխան բաղաձայնների զուգորդության և դիրքի պատճառով. օրինակ՝ Ալեքսանդր, քրոնիկլ, սենթըր (հմմտ. chronicle, centre):

Եվ չնայած դրան, այս կարգի բառերի տառադարձության հարցում պետք է խստորեն առաջնորդվել ընդունված կանոններով և ը-ով տառադարձումները դիտել որպես կանոնի խախտում:

Արևելահայերենում օտարազգի բառերի տառադարձության ժամանակ ը-ն պետք է գրել թուրքական ծագում ունեցող մի շարք անվանումներում կամ անվանման բաղադրիչում. ինչպես՝ Կզըլ-Կուլ, Կզըլ-Օրդա, Պըլ-Պալի. Մսըր, Գզընբ և այլն (ավելի ճիշտ է՝ Կըզըլ-Կուլ, Կըզըլ-Օրդա, Պըլը-Պալի, Դըզընբ, ինչպես որ հաճախ գրվում է), որոնց կարող է համապատասխանել ռուսերենի ы-ն, օրինակ՝ ղըզըլբաշի (кызылбаши), քոք-սագըզ (кок-сагыз), ադըղեյեյսկ (адыгейский), Ադըշևա (Адышева) և այլն:

Այնուհետև, որպես բացառություն, ըստ երևույթին, պետք է ընդունել ֆրանսերենի de հոդի դը (և ոչ դե) տառադարձումը, որն արդեն բավականաչափ արմատացած է. օրինակ՝ Գի դը Մոպասան, Օնորե դը Բալզակ, դը Գոլ, Բոդուեն դը Կուրտենե և այլն: Ձայնավորից առաջ դը-ն պետք է գրել ապաթարցով, ըստ փոխատու լեզվի հնչման, ինչպես՝ Ժաննա դ՝ Արկ, դ՝ Արտանյան, դ՝ Ալմավիլա և այլն:

Նպատակահարմար է ը-ով տառադարձել նաև անգլերենի sir բառը, որը մերթ գրվում է սեր, մերթ՝ սըր:

7. Անգլերենի w-ն, հակառակ տեղմիջաբանական կոմիտեի որոշման, ներկայումս մեծ մասամբ տառադարձվում է ու, ինչպես՝ Ուեստմոնդեր, Ուինստոն, Ուոլ-սալիա, Ուոլես, Ուիլկինս, «Դեյլի ռութեր», Ուելս, Ուոուներ, Ուոլտոն և այլն: Նույնիսկ ավանդական Վիլյամ անունը արդեն սկսել են տառադարձել Ուիլյամ՝ Ուիլյամ Սառոյան, Ուիլյամ Ֆոկներ, Ուիլյամ Գալախեր և այլն:

Գոյություն ունեցող կանոնի և գործնականում կիրառվող սկզբունքի միջև առաջացած խզումն ակնհայտ է: Այդ պատճառով պրոֆ. Գ. Զահուկյանի ներկայացրած նախագծում այդ կետը հիմնովին վերանայվել է և մշակվել w-ի տառադարձման նոր կանոն:

Թվում է, թե այս կանոնում անտեսված է բառամիջի w-ի հարցը, որի փոխարեն նույնպես պետք է գրել ու՝ օրինակ՝ Գոլդուոտեր (Goldwater), Հեմինգուեյ (Hemingway), Գալսուորթի (Galsworthy), Քուին (Queen) և

ալլն: Այստեղ ևս կան բացառություններ. ինչպես՝ Բրոդվեյ (Broadway), Մարկ Թվեյն (Twain), սանդվիչ (sandwich) և այլն:

Տառադարձման կանոնները մշակելիս շատ կարևոր է նաև շեղումների հաշվառումը, որոնք պայմանավորված են ավանդական տառադարձությամբ կամ ինչ-ինչ պատճառներով: Շեղումների կամ բացառությունների առկայության դեպքում անհրաժեշտ է դրանք հնարավորին չափ շատ օրինակներով կամ ամբողջովին ներկայացնել: Հակառակ դեպքում այդպիսիների առկայությունը հիսք կարող է ծառայել (և ծառայում է) դրանց նմանողությամբ այլ տառադարձությունների առաջացման համար:

Այսպես, ա-ի և է-ի միջին արտասանություն ունեցող անգլիական a (æ) ձայնավորի ա և ոչ ե տառադարձման մասին կանոն ընդունելիս անհրաժեշտ է նկատի ունենալ նաև շեղումները, որոնք բավականաչափ շատ են. օրինակ՝ ջենտլմեն (gentleman), լենդլորդ (landlord), բարմեն (barman), Մերիլենդ (Merryland), Գերրի (Carry), Ջեկ (Jack), ստենդ (stand) և այլն:

Բացի վերոհիշյալից, ուշադրություն պետք է դարձնել նաև հետևյալ հարցերի վրա:

Այսպես, նպատակահարմար է ոչ թե միայն օտարազգի x և գերմաներենի chs-ն հայերենում ֆ տառադարձել (ինչպես որ հանձնարարվում է պրոֆ. Գ. Զահուկյանի ներկայացրած նախագծում), այլև օտար ks-ն (այսինքն այն բոլոր դեպքերը, երբ ուսերենում կց է). օրինակ՝ Շեքսպիր (համար. Shakespeare), րիֆշտեքս (beefsteaks), կեքս (cakes), կոքս (cokes) և այլն:

Բուն ուսական բառերի կց-ն կա տառադարձելու սահմանափակումը, որի հասար բերվում է միակ Ակսակով ազգանվան օրինակը, մեր կարծիքով, ընդունելի չէ: Նախ, եթե լատինական ks-ն տառադարձվում է ֆ, ապա ի՞նչ հիմունքով է ուսերենի կց-ն մնում կ: Եվ ապա, տառադարձելիս այնքան էլ հեշտ չէ որոշել, թե տվյալ ազգանունը բուն ուսական ծագում ունի, թե ոչ, մանավանդ որ Ակսակովից բացի ուրիշ օրինակ էլ չի բերվում: Հետևաբար, օտար x, kc, chs և kc-ն պետք է տառադարձել ֆ, ինչպես՝ տաֆսի, բոֆս, լյոֆս, Օֆսֆորդ, էֆպանսիա, աֆսիոմա, Մաֆս, Նիֆսոն, Ալեֆսեն, Աֆսակով, Աֆսելոդ, Աֆսել, Մաֆսիմ, Ալեֆսել, Օֆսաննա, Մաֆսակովա և այլն:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ կ-ն հայերենում (ինչպես և այլ լեզուներում) ա-ից առաջ շնչեղանալով որպես կանոն հնչվում է ֆ:

Այնուհետև, նախագծում նշված է օտար լեզուների միայն կրկնակ օօ-ի տառադարձման մասին, որն ըստ արտասանության հայերենում տառադարձվում է երկու ա-ով. օրինակ՝ Մոռ, Վառեռլոռ, Լոռ, կոռդիկառ և այլն: Մինչդեռ այստեղ նկատի պետք է ունենալ մյուս կրկնակ ձայնավորների տառադարձման հարցը ևս. ինչպես՝ Հաագե, Հաագա, Քաարի, վակուում, պեռպե-տուում-մորիլե, Մագերենիլ, Գավրիիլ:

Եթե կրկնակ ձայնավորները օտար լեզվում այլ հնչում ունեն, ապա տառադարձվում են ըստ հնչման. օրինակ՝ ֆուտբոլ (անգլերեն football), մի-տինգ (անգլերեն meeting):

Ի վերջո, անդրադառնալով լատիներենի 1 հնչյունի տառադարձման հարցին:

Լատիներենի l-ն, որը ուսերենում արտահայտվում է և՛ փափուկ (լե,

ле, лѣ, лю, лѣ), և՛ կոշտ (л, лѣ, ло, лу, ла, лы) л-ով, պրոֆ. Գ. Զահուկյանը առաջարկում է բոլոր դեպքերում հայերենում տառադարձել լ: Այս մոտեցումը, որը la, lu-ի (ռուսերեն лѣ, лю) հարցում հակառակ է ընդունված տառադարձության, թեև սկզբունքային տեսակետից ճիշտ է, բայց ընդունելի չէ հուելյալ նկատառումներով:

Նախ՝ լատինականի և համապատասխան ռուսերենի л, ле, лѣ, лѣ, лю, лѣ-ի տառադարձման հարցում որևէ տարակարծություն, կարծես, չկա. օրինակ՝ լեգալ, ալեգրո, լիմֆատիկ, լիֆտ, լիցեյ, բլոկ, լոկալ, ժոնգլյոր և այլն: Այսպիսի դեպքերում դրվում է լ և համապատասխան ձայնավորը:

Լ-ն (ռուսերենի лъ-ն) բաղաձայնից առաջ հայերենում նույնպես արտահայտվում է լ-ով, առանց փափկացման կամ քմայնացման որևէ նշանի կամ յ-ի հավելման. օրինակ՝ ալտ, ֆիլմ, մուլտ, ալբոմ, վալս, ալմանախ, Բալմոնտ, Բալզակ, Կալման և այլն (հմմտ. альт, фильм, мульт, альбом, вальс, альманах, Бальмонт, Бальзак, Кальман)¹⁰:

Այս տիպի բառերում ռուսերենի նմանողությանը լ-ն մեծ մասամբ փափուկ է հնչվում (գրական արտասանությամբ):

Առարկությունը վերաբերում է а-ից, у-ից առաջ հնչվող լատինական լ-ին, այսինքն la, lu-ին, որոնք պրոֆ. Գ. Զահուկյանն առաջարկում է, առանց հաշվի առնելու ռուսերենի лѣ, лю կամ ла, лу գրությունները, բոլոր դեպքերում տառադարձել լա, լու¹¹:

Սակայն չի կարելի հաշվի չառնել այն հանգամանքը, որ лѣ, лю-ով բառերը ռուսերենում ոչ մեծ թվով, հիմնականում ֆրանսերենից և ֆրանսերեն բառերի նմանողությամբ լատիներենից և այլ լեզուներից արված փոխառություններ են, որոնցում la, lu-ն՝ ֆրանսերենի а-ից և у-ից առաջ բավականաչափ փափուկ հնչվող լ-ի ընդօրինակությամբ տառադարձվել են лѣ, лю. օրինակ՝ революция (revolution), эволюция (evolution), трансляция (translation) և այլն: Հայերենը, որ ալս կարգի փոխառությունները կատարել է մեծ մասամբ միջնորդաբար, ելակետ է ունեցել ռուսերենի տառադարձությունը, ինչպես վերջավորության (հմմտ. tion, ռուսերեն ция), այնպես էլ la, lu-ի հարցում. օրինակ՝ ֆրանսերեն evolution, ռուսերեն эволюция և հայերեն էվոլյուցիա:

Պետք է հաշվի առնել նաև, որ լ-ն հայերենում ա, ու, ո ձայնավորներից առաջ, որպես կանոն, հնչվում է կոշտ. օրինակ՝ գլան, գալուստ, բլուր, սալուր և այլն: Ուստի, եթե վերոհիշյալ կարգի փոխառյալ բառերում գրվի լա, լու, ըստ գրության այդպես կոշտ էլ կհնչվի: Իսկ այդպիսի կոշտ արտասանությունը ամենեկին նպատակահարմար չէ, որովհետև դա չի համապատասխանում նաև բոսն փոխառու լեզվի համապատասխան բառերի արտասանությանը:

Փոխառյալ ֆիլմ, մուլտ, ուելս և այս տիպի այլ բառերում կարո՞ղ է արտասանվել փափուկ լ, քանի որ լ+ բաղաձայն բառավերջը կամ վանկավեր-

¹⁰ 20-ական թվականներին այս կարգի բառերում ընդունված էր ավելացնել յ՝ փափկացման համար, ինչպես՝ կույլառաւ, բայլէիկ, բայլգամ, վայլս, պայլտո, ֆայլը, Օյլգա և կամ լ-ի վրա դրվում էր ապաթարց՝ վալ՝ս, ֆալ՝ը և այլն:

¹¹ Խոսքը այստեղ միայն օտարազգի բառերի մասին է և ոչ ուսականի, որոնց վերաբերյալ տարակարծություն չկա, ինչպես՝ Լյուրա, Վալյա, Վալյանեկի և այլն:

ջը հայերենին հատուկ չէ, ուստի փափուկ արտասանության ընդօրինակումը կատարվում է հեշտությամբ:

Այնուհետև, եթե la, lu-ի տառադարձման հարցում նկատի չունենանք ռուսերենի ля, лю-ն, ապա այսպիսի մոտեցումը տարբերացությունների առաջացման աղբյուր կծառայի, քանի որ ըստ նախագծի պետք է գրվի էվոլուցիա, ռեվոլուցիա, տրանսլացիա և՛ սալյուտ, վալյուտա (ըստ 1-ից հետո օ, ւ հնչման):

Զի կարելի անտեսել նաև այն, որ լյա, լյու-ի գրության հարցում ներկայումս որևէ տարբերացություն և անմիօրինակություն չի դիտվում: Այդ տառադարձությունն արդեն արմատացած է¹²:

Վերոհիշյալ նկատառումները հաշվի առնելով գտնում ենք, որ այս հարցում որևէ փոփոխություն մտցնելը նպատակահարմար չէ, ուստի պետք է դրել էվոլուցիա, տրանսլացիա, կալկուլացիա, կապիտուլյացիա, իլյումինացիա, իլյուստրացիա, լյուֆա, կյուֆեմբուրգ, պլյուս, լյումպեն, շլյուզ, ալյումին, կուցիֆեր, լյումբագո, գլյուկոզա, կյուդովիկոս և այլն:

Հատինական 1-ի տառադարձման հարցում, հենվելով ռուսական տառադարձության վրա, ելնում ենք սկզբնաղբյուր լեզվի հնչումից. օրինակ՝ Рлю-մինգ, բայց՝ Рлюմֆիլդ, Рлюֆիլդս և այլն: Վերջին դեպքում նկատի է առնվում ոչ թե լատիններենի 1-ն, այլ սկզբնաղբյուր լեզվի, կոնկրետ անգլերենի, 1-ի կոշտ հնչումը:

Օտարազգի բառերի, տերմինների և հատուկ անունների տառադարձման սկզբունքների վերանայումը մեր լեզվի մշակույթի համար ունի գործնական մեծ նշանակություն: Ուստի, անհրաժեշտ է այդ կարևոր գործին վերաբերվել ամենայն պատասխանատվությամբ և միայն լեզվական փաստերի բազմակողմանի և խոր քննությունից հետո անել համապատասխան եզրակացություններ:

О ТРАНСКРИПЦИИ ИНОСТРАННЫХ СЛОВ

ТЕРЕЗА КАРАГУЛЯН

Резюме

Разнобой в транскрипции иностранных слов и собственных имен в армянском языке очевиден. Поэтому статья (проект) проф. Г. Б. Джаукяна «Принципы транскрипции иностранных слов», напечатанная в «Вестнике» общественных наук АН Арм. ССР (1972, № 3) в порядке обмена мнениями, своевременна, требует особого внимания и тщательного рассмотрения.

При транскрибировании иностранных слов главным источником для армянского языка является русский, так как заимствования из иностранных языков в большинстве случаев делаются через русский. Придерживаясь такого принципа, необходимо также учесть и звуковые особенности армянского языка, которые в ряде случаев дают возможность точнее выразить звучание языка первоисточника.

¹² 1939 թ. որոշմամբ սահմանված էր համապատասխան բառերում գրել լա, լու: 1953 թ. տերմինաբանական կոմիտեն վերանայեց այս հարցը և ընդունեց օտար la, lu և ռուսերենի ля, лю-ն հայերենում լյա, լյու տառադարձելու որոշում: